

Ս. ԷԶՄԻԼԺԻՆՆ

ՈՒ

ԻՔԻ ՀՕՏԸ

(Մի երես նուիրակութեան պատմութիւնից)

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» երգում է Հայաստանեայց ս. եկեղեցին ամենայն տարի իւր կաթուղիէ Մայր Տաճարի տօնին ահա հազար երկու հարիւր տարուց աւելի է։ Այս գիտակցութեան հասնելու համար պէտք էր եղել երեք դարերի փորձը. Էջմիածնի հիմնարկութիւնից մինչ այն ս. կաթուղիկոսը, որ ազգի այդ գիտակցութեան թարգմանն եղաւ շատ չար ու բարի էր տեսել հայ ազգն և համոզուել էր, որ ս. Գրիգորի հիմնարկած Մայր եկեղեցումն է ծագել մեզ լոյս։

Այդ լուսով պայծառացել էր հայի տեսական ու բարոյական գիտակցութիւնը, նա մասնակից էր եղել ճշմարիտ մարդկային կեանքին, նա զգացել էր թէ ինչ է մարդկային հոգեկան ճշմարիտ կեանքը, որի նպատակը համոզմունքի կոիւն էր և ոչ աշխարհային փառքի համար մաքառումը։ Երբ ս. Մեսրոպ արքունի զիւանը թողնում էր և անսպասելի էր առանձնանում գիտէր նա, որ մի աւելի գերագոյն ծառայութեան էր կոչուած ինքը. երբ նա գրերի գիւտի վրայ կեանք էր մաշեցնում, համոզուած էր, որ իւր ազգին մի աւելի տեսական փառք պիտի պարգևէ, քան թէ կործանման դատապարտուած Արշակունի զահին ծառայելով։ Երբ մեծ Հայրապետը նախարարների ժողովի առաջ արտասանեց այն պատմական մեծ խօսքը, թէ «քան լիցի ինձ փոխանակել զիմ ակնացեալ ոչխար ընդ առողջ զազանի» որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս, ստիպուած էր ողբալով յետ քաշուիլ ասպարիղից, որովհետեւ տեսնում էր, որ բարոյական մեծ զաղափարներ անձամբ ինքն իւր հայրենակցներին։ Բայց ինչքան ժամանակ էր պէտք, որ ազգի մեծագոյն մասն այդ գիտակցութեան հասնէր. հազիւ երկու տասնեակ տարի միայն, երբ նոյն նախարարները, որոնք փոխանակել էին իրենց

հիւանդ ոչխարն առողջ զազանի հետ, հայ ժողովրդի զլուին անցած կռուումէն այն վերացական բարիքի համար, որ կոչուում է եկեղեցի։ Այս մտաւոր յեղաշրջման կեդրոնը Ս. Էջմիածինն էր եղել, ուր պատրաստուել էին հայկական նոր կեանքի առաքեալները։ Այդ քաջ առաքեալների շնորհիւ էր ահա, որ կարճ ժամանակում Ս. Էջմիածինը նշան դարձաւ գերագոյն բարիքի։ Այն օրուանից, երբ վահան Ամատունին աչքերը Օշականի առապարից ս. կաթուղիէին դարձրած զօրութիւն ստացաւ հիւսիսականների առաջնորդին, ահա ինչ կաճեաց վերարկուով ծածկուած հրեային կործանելու, հաստատուեց Ս. Էջմիածնի հեղինակութիւնը։ Հինգերորդ դարուն յաջորդող վեցերորդ դարումն էր, որ հայ եկեղեցին իւր զգացումներն առ Էջմիածին երգի փոխեց և ամէն տարի սկսաւ երգել «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։

Հոյսն է այն նշանակը որով արտայայտուում է մարդկութեան նպատակի զաղափարը, լոյսը պայծառութիւն, ջերմութիւն և կեանք է, առանց ջերմութեան և պայծառութեան կեանք չկայ ոչ բուսական և ոչ կենդանական աշխարհում, ուրեմն ո՛րքան սուրբ և տօնելի է այս վայրը, ուր մեծ լոյս ծագեց Հայաստան աշխարհում։ Այդ վայրը Ս. Էջմիածինն էր, որ ցայսօր պահել է իւր նուիրականութիւնը։

Եկան ու անցան փոփոխութեան ու կործանման դարերը. խառնարով պատուեցաւ և այն սրբավայրն, ուր մեզ լոյս էր ծագել, սակայն անհնարին էր, որ լուսոյ աղբիւրը ցամաքէր, քանի որ նրանից բղխած լոյսը բազմաթիւ ջահեր էր վառել Հայաստանի շատ անկիւններում։ Անցան այլ ևս և օթն երկար ու ձիգ դարեր և Էջմիածինն հասաւ վերջին անշրջութեան և ինչպէս որ ի հնումն աւերուած ու ամայացած Սիոնը նորից կանգնեց, վերակենդանացաւ և հասաւ այն փառքին, որ իւր մէջ ընդունեց մարդկութեան փրկչին, այնպէս էլ տասն և հինգերորդ դարում ամացի և ա-

ւերակ Ս Էջմիածինը վերանորոգուեց, կենդանացաւ և ահա երեք դարուց աւելի է կրկին այն կաթուղիկէն է որի վրայ յառած են բոլոր հայերի աչքերն այնպէս որպէս Վահան Ամատունու աչքերը: Ս. Էջմիածնի վերակենդանութեան առհաւտոյն այն լոյսն էր որ մի օր ծագել էր այնտեղ: Ս. Էջմիածնից վառուած բազմաթիւ ջահերը տակայծում էին հարիւրաւոր տարիներ հայաստանի բոլոր անկիւններում որտեղից կրկին անգամ վառուեցաւ ընդհանուր լուսաւորութեան ջահը Ս. Էջմիածնում: 1444-ին Ս. Էջմիածնում հաւաքուած հինգ հարիւր եկեղեցականներն ապրել սկսեց և լոյս էին առել Ս. Էջմիածնից որ այդ ժամանակ բերին կրկին ի Ս. Էջմիածին:

Բ.

Նոր կեանք սկսուեցաւ Ս. Էջմիածնում: Փառաւոր չէր այդ կեանքն իւր արտաքինով որքա՞տ էր Ս. Էջմիածինը, աղքատութեան մէջ էին սնանում նորա որդիք և մխիթարիչ էին հանդիսանում վայրավատին, աղքատ և բռնակալների լծի տակ հեծող հօտին: Բայց ճիշտեղ բարոյական կեանքը յաղթութիւն չէ տարիւն բնական տարերական կեանքի վրայ: Այս անգամ ևս բարոյական կեանքն եղաւ յաղթողը: Նիւթական սոսկալի նեղութեան մէջ հեծող Էջմիածինն երկու դարու ընթացքում կրկին իւր գերիշխանութիւնը ձեռ բերաւ և դարձաւ կրկին անգամ լուսոյ աղբիւր: Գերերջանիկ Սիմէոն կաթուղիկոսի օրով երբ ամբողջ առաջաւոր Ասիան թանձր խաւարի մէջ էր թարթափում երբ ասիական ազգերից ոչ մէկն էլ մասնակից չէր մարդկային ազգի նոր քաղաքակրթութեան: Ս. Էջմիածինը փայլում էր իբրեւ մթութեան մէջ վառուող մի հեռաւոր ծրագրող, դարձող, զիրք, գրականութիւն, ապարան և թղթագործարան, յիշատի որ ասիական բաներ չէին այդ շրջանում: սակայն Ս. Էջմիածնում կային գրանք և տարածում էին իրենց ոյժը ցրուած հայ ժողովրդի մէջ: Այնքան մեծ էր այդ լուսոյ և բարոյական կեանքի ոյժն որ Ս. Էջմիածնին և նորա շրջ-

ջակայքին տիրող իշխանները Ս. Էջմիածնի գահակալի միջնորդութեանն էին դիմում քաղաքական յարաբերութիւնների ժամանակ: Այդ ոյժն զգացին երկրի բռնակալներն և զրանցից մեծագոյնը իւր տիմարութեամբ քարերի մէջ կարծելով Ս. Էջմիածնի զօրութիւնը քանդեց և այդ քարերը Պարսկաստան փոխադրեց . . . Աւելի զօրաւոր ապացոյց կայ արդեօք որ և է պատմութեան մէջ բարոյական զօրութեան ոյժը ցոյց տալու համար: Շահարբասի պէս արեւելեան մեծ բռնակալն ակամայ խոստովանեց իւր տկարութիւնը և Ս. Էջմիածնի քարերը կրել տալով Պասկաստանի խորքերը չբարոյացաւ նրա ոյժը տանել այնտեղ: Այս մի շատ մեծ պատմական դաս է յետագաներիս համար:

Բայց Ս. Էջմիածնի ոյժն ստիպուած էին խոստովանել և աւելի լուսաւոր երկրներում: Լեհաստանում և Եւրոպական լուսաւորութեան հաղորդակից մի երկրում յիսուսեան ծիւղային զօրութեամբ օժտուած կրօնաւորներն անգամ չէին կարողանում մի բուռն ժողովուրդ օտարացնել Ս. Էջմիածնից և երկար տարիներ կռուելուց յետոյ միայն հասան իրենց նպատակին: այն էլ կեղծիքով: Ս. Էջմիածնի հեղինակութիւնը զոգանալով Նիկիոյ Թորոսով չի ձեռքով:

Ի՞նչումն էր արդեօք այս զօրութեան գաղանիքը. մի՞թէ յիշաւ Ս. Էջմիածնի տեղում թէ քարերի մէջ կամ ինչպէս հաւատացած էր Սիմէոն մեծ կաթուղիկոսն այն հանգամանքի մէջ, որ Տէրը Հայ ազգին կրկնակի էր սիրում, որովհետեւ մի անգամ իջաւ ի սէր ամբողջ մարդկութեան եւ երկրորդ անգամ՝ յատկապէս Հայոց համար:

Գ.

Ս. Էջմիածնի հեղինակութեան գաղտնիքն հասկանալու համար մեր անցեալ կեանքի մի փոքրիկ ուսումնասիրութիւն է պէտք. այդ ուսումնասիրութիւնն այսօր մասամբ դիւրացած է, բաւական է եթէ մի ակնարկ ձգենք այն յիշատակարանի վրայ, որ թողել է մեզ Սիմէոն կաթուղիկոսն և վերջերս հրատարա-

կել է Գիւտ քահանան իւր «Հայոց պատմութեան դիւանի» երրորդ գրքում: Դնէն էին կատարուում Ս. Էջմիածնում 1768—1767 թուականներին. այսօր լուսանկարչական պատկերի պէս մեր առջև դրուած է. և ի՛նչքան բաղմամբ հուրդ է այդ պատկերը: Հոլանդիայից մինչև Թաղաղական ուղիւնի սահմանները, Հաշտարիսանից մինչև Պարսից ծոցը ցրուած Հայերի մի կենդանի կենտրոն էր Ս. Էջմիածինը: ամենայն օր փայեակ նամակաբերները, նուիրակ վարդապետներն ու եպիսկոպոսները, ուխտաւորների անընդհատ հոսանքը շարժուում էր դէպի Ս. Էջմիածին և այնտեղից դէպի դուրս: Հայրապետական թղթ-թակցութիւնների ցանկը մի այնպիսի գործունէութեան ապացոյց է, որ այժմ միայն Հրեռովմի պապի աթոռումն ենք տեսնում մենք: Բայց ի՛նչքան բաղմամբ եւն այդ թղթակցութիւնների նիւթերը, եկեղեցական, վարչական, քաղաքական, առեւտրական, զրական և ըն և ըն, այստեսակ բոլոր խնդիրների համար մտածողներ և գործողներ կային Ս. Էջմիածնում:

Համեմատեցէք այն ժամանակուան գործունէութեան ու հաղորդակցութեան դժուարութիւնների հետ այժմեանը և կը տեսնէք, որ հաղորդակցութեան դիւրութեան յարաբերական զարգացման բոլորովին հակառակ ընթացքով նուազել է գործունէութիւնը: Միթէ կարիք չը լինելու պատճառով: Բ՛ւ՛ր և մի՛ լիցի: Սակայն նուազումն սպառումն չէ նշանակում և ինչ որ այսօր չը կայ, վաղն անհրաժեշտաբար կը լինի:

Մեզ համար հետաքրքրական են այն միջոցները, որոնցով պահպանում էին այդպիսի ընդարձակ յարաբերութիւնները: Այդ միջոցները շատ բարդ էին, բայց վերին աստիճանի նպատակայարմար: Ս. Էջմիածինն իսկական սիրտըն էր բոլոր Հայերի, ներդութեան և աղքատութեան մէջ էր մի հայ գաղութ, գիւղ, ընտանիք, առաջին օգնութեան հասնողը Հայրապետն էր, որ և է աղանդ, մոլութիւն էր ծարակում մի տեղ, Հայրապետն էր շեղուածներ-

ըին խրատողն և ուղեղ բերողը, տղիտութեան մէջ էր խարխալում մի եկեղեցի, լոյս ուղարկողն Ս. Էջմիածինն էր, քաղաքական հանգամանքներն էին ծանրանում մի երկրի հայերի վերայ, Հայրապետն էր նրանց դատաւարը, գիտութեան և արուեստի որ և է արգասիք պէտ էր ձեռք բերել: Ս. Էջմիածինն էր այդ անողն որ մէկը թուեմ արդեօք, ամէն մի կարիքի ժամանակ Հայոց Հայրապետըն իսկական Հայր էր ամէնքի համար:

Բայց ի՛նչ միջոցներով էր հնարաւոր այս ընդարձակ գործունէութիւնը: Նուիրակութեան միջոցով:

Թէ ի՛նչ էր նուիրակութիւնն և ո՞չք էին նուիրակները, այդ մասին շատ բան չը գիտէ ժամանակակից սերունդը, բայց հին նուիրակներին և նրանց գործունէութեան լաւ ծանօթ են մեր մէջ դեռ ևս ծերունիք: Այդ մեծ եկեղեցական գործօնի հետ ես աւելի լաւ չեմ կարող ծանօթացնել ընթերցողներին, քան եթէ յառաջ բերելով այն կանոնադրութիւնը, որ իբրեւ վախճանական կանոնադրութիւն կադմակերպուեց մեր դարու սկզբում Եփրեմ կաթողիկոսի և Ս. Էջմիածնի կառավարիչ սուրբ Ժողովի բարձրագոյն խորհրդարանի ձեռքով իբրեւ հրահանգ նուիրակների համար:

Դ.

Այդ վերին աստիճանի նշանաւոր վաւերացութիւն հրատարակութիւնն ևս պարտական ենք մենք արժանապատիւ Գիւտ քահանային, որ իբրեւ յաւելուած տպագրել է այդ թուղթը «Դիւանի» Գ. հատորի 3. ծանօթութեան մէջ (եր. 808—827): Նուիրակութեան այս հրահանգը բաղկացած է 18 յօդուածներից, որոնցից առաջին 6 վերաբերում են նուիրակութեան ընդհանրապէս և վերջին 12 նուիրակներին: Ահաւասիկ այդ հրահանգների տմբոյնում:

Ա. Գերագահ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի նուիրակի պաշտօնն է իւր նուիրակութեան շրջանում ուսուցանել պահել Փրկչի վարդապետութիւնը և Հայաստանեայց լուսաւորիչների կանոնները,

Բ. Նուիրակները փոխանորդ են քահանայապետին և պետք է տեղեկանան հաւատացեալներից իւրաքանչիւրի, մեծի և փոքրի, հարստի և աղքատի, հոգեւորականի և աշխարհականի մարմնաւոր և հոգեւոր հանգամանքներին, շեղուածներին ուղղութեան բերեն, խրատեն իրրե հայր և եղբայր կարեկցութեամբ և մարուր վշտակցութեամբ: Նրանք պարտական են քահանայից մասին տեղեկանալու թէ զգա՞տ են, արթո՞ւն են իրենց պաշտօնին, հսկո՞ւմ են խոստովանութեան և հաղորդութեան վրայ և չեն թոյլ տալիս որ հաւատացեալները մոլորութեան մէջ մտնեն: Նուիրակները պիտի հրահանեն նաև քահանայից և առաջնորդաց վրայ, որ նրանք ժողովրդի հետ համաձայն օրինաց վարուեն և չը նեղեն:

Գ. Նուիրակների պաշտօնն է «պատմել ամենեցուն որք հարցանեն ծնողասիրաբար զողջութենէ եւ զընդութենէ մօրն լուսոյ, արքայ կաթողիկէ ըջմիածնի, և ծանօթացել Ս. Էջմիածնի վիճակի հետ և բաժանել ս. միւռնն»:

Դ. Նուիրակի պաշտօնն է շնորհակալութեամբ և օրհնութեամբ ընդունել նուէրներն և ընծաներն, որ ջերմեռանդութեամբ կը տրուին յանուն Ս. Էջմիածնի և նուիրակին:

Ե. Նուիրակների պարտքն է յանուն Ս. Էջմիածնի տրուած նուէրներն ստանալ, պահպանել զգուշութեամբ և տեղ հասցնել համաձայն նուիրողների գիտաւորութեանց:

Զ. Նուիրակների պաշտօնն է ծանաչել իրենց ժողովուրդն և իրենց անձն և ամենայն անգամ պատշաճաւոր տնօրինութիւններ անել, որպէս զի անկարգութիւնները բարձուին, Այս նպատակի համար պատուիրուում է նուիրակներին հեռու մնալ հրապարտութիւնից, բարկութիւնից, տիրաբար ձօխանալուց, շահասիրութիւնից և լին:

Այս նպատակներին հասնելու համար 12 այլ կանոններ են սահմանուած, որոնք են.

1. Նուիրակներն իրրե քահանայապետի ներկայացուցիչ պիտի պահեն իրենց, պիտի զգուշանան անվայել քայլ անելուց և բառ արտասանելուց:

2. Անխափան եկեղեցի պիտի գնան և պիտի չը ծուլանան, Մինչև իսկ իրենց մարմնոյ կարիքները մոռանալով՝ նրանք պիտի մասնակցեն ժամերգութեանց և ամենայն տեղ պիտի բարոջեն:

3. Նուիրակներին աչքը միշտ դէպի ս. Աթոռը պիտի լինի ուղղուած, նրանք Մայր Աթոռի օգուտը պիտի մտածեն և թէպէտ 3 տարի է նուիրակութեան շրջանը, պիտի աշխատեն գործերը շուտով աւարտել և դառնալ Ս. Էջմիածին, որ չը ծանրանան խեղճ ժողովրդի վերայ:

4. Նուիրակները պիտի խուսափին չափազանցութիւնից և ամէն անգամ ժողովրդի օգուտը պիտի մտածեն որ չծանրաբեռնուի նա:

5. Պատուիրուում է նուիրակներին չափաւոր լինել իրենց զգեստների և կերակրի մէջ, այլ և զգուշանալ ազատութիւնից և ժաշտութիւնից:

6. Նուիրակները պիտի տուրքերը խոհեմութեամբ ժողովեն. ամենայն տեղ իրենց օժանդակ առնեն երկու խոհեմ քահանայ և 2 յարգուած աշխարհական, որոնք պիտի որոշեն իւրաքանչիւրի մասն ու հաւաքեն: Ընդ սմին արգելուած է բարկութիւն և անէծք:

7. Նուիրակներն ամէն մի տեսակ նուիրանաց համար մանրամասն հաշիւ պիտի տան քահանայապետին:

8. Նուիրակները պիտի հսկեն Ս. Էջմիածնի և այլ գանձանակների և գանձապահների վերոյ:

9. Երաւունք չէ տրուում այլ Աթոռների գանձանակներին ձեռնամուխ լինելու:

10. Արգելուում է նուիրակ եպիսկոպոսներին վիճակներում ձեռնադրութիւն անել, որովհետև այդ իրաւունքն առաջնորդներինն է: Նուիրակներն իրաւունք ունին ձեռնադրելու միայն իրենց յատուկ սպասաւոր սարկաւազներին, Իսկ եթէ առաջնորդի համաձայնութիւնը լինի, պէտք է ձեռնադրեն և վիճակի համար հոգեւորականներ և այն խիստ քննութեամբ:

11. Նուիրակներն իրաւունք չունին դատաստան կտրելու առանց խորհրդակից քահանայից, իշխանաց և երեւելաց:

12. Պատուիրուում է նուիրակներին, որ քաղաքավարութեամբ և վայելուչ կերպիւ վարուին առաջնորդների և Ս. Երուսաղէմի նուիրակների հետ, իսկ եթէ իրենց յորգորներին չը լսեն զանցառուք, այդ մասին յայտեն Գահանայապետին և պատրիարքին:

Այս կանոնները պիտի համարենք նուիրակութեան փորձերից հանած խրատներ և նուիրակութեան կատարելագործութիւն, որովհետև այդ հաստատութիւնը շատ անգամ առիթ է եղել և մեծամեծ զեղծումների ու չարիքների: Յաւելով արձանադրում ենք, որ կատարելագործութեան շրջանն և անկման ու խափանման շրջան եղաւ նուիրակութեան, որով զրկուեցաւ թէ ժողովուրդը կանոնաւոր հովուութիւնից և թէ Ս. Էջմիածինը իւր ազդեցութիւնից:

Ե.

Մի գաղափար ապուհ համար՝ թէ ի՞նչ արդիւնքներ էր ստանում Ս. Էջմիածինը ժողովրդից՝ յառաջ ենք բերում այստեղ այն նուէրներն ցանկը, որ նուիրակները ժողովում էին։ Հայաստանեայց ամբողջ եկեղեցին նուիրակական թեմերի էր բաժանուած, որի ցուցակը հետաքրքրուողը կը կարգայ «Դիւանի» Գ. դրքի վերջը։ Եւրաքանչիւր նուիրակ 3 տարի շրջելուց յետոյ պարտաւոր է Ս. Էջմիածին դառնալ և հետը բերել իւր շրջապարթեան արդիւնքը։ Նուիրակները ժողովում էին։

ա. Եւրաքանչիւր հայ հաւատացեալից 40 փարայ երեք տարուան համար իրրեւ աթոռահարկ։

բ. Զառամանից տուրք, որ ամէն ցանկացող վճարում էր Ս. Էջմիածին իրրեւ յիշելիք իւր ննջեցեալների համար։

գ. Թիշատակի նուէրներ, անօթներ և զգեստներ։

դ. Խոստովներ, որ հաւատացեալներն արած էին լինում յանուն Ս. Էջմիածնի։

ե. Հոգեւորական մի տեսակ տուրք ի յիշատակ մեռելոց։

զ. Խաչահամբոյր, յատկապէս Ս. Իջման տեղն համբուրելու համար արուում էր նուիրակին հաւատացեալների կողմից։

է. Աջահամբոյր Հայրապետին հասցնելու համար։

ը. Մատաղ կամ մատաղի գին։

թ. Գաւազանապտուղ, յատուկ նուէր նուիրակին։

ժ. Փոքրաւէրք, նուէրներ նուիրակի սպաւորներին։

ժա. Ժամոց հայրապետական և նուիրակական։

ժբ. Պաշտօնէից հասք, պարգև Ս. Էջմիածնի միաբաններին։

Մեր ձեռքը դանուած ցուցակներից ամբողջադրին այս է, որ քաղեցինք Թաղիազեանցի ճանապարհորդութիւնից, մի երկու

այլ ցուցակ կայ հրատարակուած և «Դիւանի» մէջ։ Հետաքրքիր աչքը կը տեսնէ թէ Ս. Էջմիածինն ի՞նչ տեղ էր բռնում ամէն մի հայի սրտում և ի՞նչքան մասնակից էր նրա կեանքին։ Ամէն հայ ընտանիք մի չնչին նուէրով իւր միութիւնն էր յայտնում Ս. Էջմիածնի հետ. իւր գործերի յաջողութեան և անյաջողութեան ժամանակ խոստովանելով Ս. Էջմիածնի պաշտպանութիւնն էր հայցում յիշատակներով հոգեբաժիններով և քառասունքով Ս. Էջմիածնի միաբանութեան աղօթիցն էր յանձնում իւր ննջեցեալներին, խաչահամբուրով և աջահամբուրով Ս. Էջմիածնից ու Հայրապետից իւր կարօտն էր առնում։ Ահա իսկական միութիւն, ահա աղքային եկեղեցի և եկեղեցական ժողովուրդ։ Ուր եւ այս ամէնն այժմ։

9.

1836-ի օրէնքով մի նոր կեանք է սկսել մեր եկեղեցին, որ դեռ ևս չէ կատարելագործուել և հին կարգերի խախտումից յետոյ նոր կարգերի հիմք չեն դրուած, բայց ամօթ չէ մեզ, որ կէս դարուց աւելի փորձառութեան շրջանում չը կարողացանք գտնէ հինը վերականգնել։

Նուիրակութիւնը վերացաւ և մնաց առաջնորդութիւնն ու յաջորդութիւնը, առաջնորդաց իրաւունքները մեծացան, հսկողութիւնը վերացաւ նրանց վերայից, ուստի և նրանք ամենայն կապ ընդհատեցին Ս. Էջմիածնի հետ, որպէքը խորթացան իւրեանց մօրից և մայրը մնաց անմխիթար։

Ժամանակ է այս ամէնի մասին մտածելու և այսօր Ս. Էջմիածնի հազար հինգ հարիւր իննսուն և երեքամեակի օրն ամէնից յարմարն է մեզ համար այդ խորհրդածութիւններն անելու։ Ժամանակները սահում են, խորթութիւնն և օտարութիւնը մեծանում, աղքատութիւնն ու տղիտութիւնն շատանում, իսկ մենք անհոգ նստած ենք, լաւ միտած ենք այս մասին, հոգեւորական և աշխարհական անձինքս, և դարմաններ խորհնք։ Հար-

կաւ ամենամեծ թերացումն այս մասին հոգեւորականներինն է եղել բայց անմասն են արդեօք և աշխարհականները չենք կարող հաստատել:

Եթէ ցարդ առաջնորդները, յաջորդները և քարոզիչները չեն մտածել որ նրանք մի մի նուիրակ են Ս. Էջմիածնի, թող մտածեն այսուհետեւ եթէ աշխարհական իշխաններն ու աղքատները չեն յիշել, որ իրենք Ս. Էջմիածնի զաւակունք են, թող յիշեն այսուհետեւ: Ահա շուտով կը ներկայանայ գեղեցիկ առիթ. Տեառն յաջողելով մեր սիրեցեալ Հայրապետը մտադիր է ս. միւսունն օրհնել աշխարհ պտորտաստուենք Ս. Աթոռի հետ մեր կապերը ամրացնելու:

Ե. Զարամանց.



ԱՌԱՆ ԵՐԿԻՐ ԿԱՄ ԱՇԽԱՐՀ

Այն երկիրը, որը գտնուում է Կուր և Երասխ գետերի և Սեան լճի մէջ տեղը Պարսից¹ Արարաց² և Վրաց³ պատմագիրնե-

1. История Религий древняго Мира. Персія, СПб. 1883. т. III 148.— „Ормуздъ — первый создалъ слѣдующія шестнадцать областей, надѣленные разными благами: 1) Эриена Веедіо, (Аранъ, часть Арменіи съ благороствореннѣйшимъ климатомъ:“

Պարսից Զրադաշտական օրինագրքի—Աւեստայի Վենդիդատ—սարէ «Պատմութիւն ստեղծագործութեան» բաժնի մէջ, Արմիզդին վերագրուում է տան և վեց զանազան երկիրների ստեղծագործութիւնը ամէն մի բարիքներով հանդերձ, Միայն յիշեալ ստեղծագործութեան անգրանիկ տեղը բռնում է «Էրիենա Վեեգիօ», Առանի երկիրը իւր բարեխառնագոյն կլիմայով, Թերեւ մեր նախահայրերը Էրիենա—Վեեգիօ—ն բարեխառնագոյն թարգմանելու տեղ Աղուանք—Աղու—քաղցր (քաղցր ընտելիւն ունեցող երկիր) լինեն անուանած յիշեալ երկիրը կամ աշխարհը, Պարսից «Չաննաթիլիլուլթ» պատմութեան մէջ Կուր և Երասխ գետերի խառնուրդին մօտ մի հին քաղաքի մասին յիշատակութիւն է անում «Փայթախտարան» Առանի, աթոռանիստ կամ Առանի նստոցը, Գուցէ Առանի երկրի սահմանակից Հայոց Փայտակարան նահանգի անունը «Փայթախտարան» անուան աղաւաղումն լինի:

Բառարան Պարսկերէն. Պոլիս 1826. եր. 102. «Էրրան. է անուն ընդարձակ գաւառի միոյ, յորում են յաղաքն Պերտէ, Կէնճէ, Հէմքիուր և Պէյլէգան. և ընդ մէջ այսր գաւառի և Աղբրապաճանի հոսեալ անցանէ գետն Երասխ»:

րից անուանանուում է «Արանդամի», Առանի երկիր: Հայ պատմագիրներից⁴ և յիշատակագիրներից⁵ ոմանք գործ էին ածում աշխարհ, երկիր Ռանայ, Առանայ կամ Առանայ, իսկ սոյն երկրում իշխողներից շատերին կոչում են Առան Շահիկ կամ Եռանշահիկ⁶ Տէր:

Մատենագիրներից յետոյ միակ արձանանագրութիւնը որ յիշատակում է իւր մէջ Առան կամ Առան անունը և որ առաջին անգամ հանդիպել է ինձ, Խաչենու Առաջաձոր գիւղի ճապին ձորի քարաժայռի արձանագրութիւնն է: Տարաբաղդարար Գեր. Մակար Եպիսկոպոսի—Արցախ աշխատասիրութեան մէջ միանգամայն աղաւաղուած է: Տես՝ Արցախ երեւ- 288—289:

Ջաանշիր զաւառի Առաջաձոր (Գովշանլու) գիւղի արեւելեան ճապին ձորի քարաժայռի արձանագրութիւնը: Տեղեկութիւնք. քարաժայռի բարձրութիւնն է 2 սաժէն 10 վերջոյ: Ժայռի հիւսիս—արեւմտեան, հարաւ—արեւմտեան և հարաւ—արեւելեան ծակաները ծածկուած են արձանագրութեամբ և քանդակած խաչերով:

—Հիւսիս—արեւմտեան ծակատի քանդակներն են՝ երեք զանազանակերպ խաչեր և մի ծածկագրութիւն ունեցող խաչանման քանդակ. չորս տող արձանագրութիւն որից երկու տողը խալաւ եղծուած:

—Հարաւ—արեւմտեան ծակատի քանդակներն են քսան և մէկ մեծ և փոքր խաչեր և տասներկու տող արձանագրութիւն, երկուսը կիսանդժ:

2. Մորթման. հատուածք Պատմութեան Հայաստանի քաղաքը յԱրարացի Պատմագրաց, թարգմ. Իւթիւճեան. Պոլիս 1874:

5. Համառօտ պատմութիւն վրաց. ընծայեալ Ջուանշէրի պատմչի. Վենետիկ 1884. երես 29, 73, 75:

4. Ս. Օրբելեան պատմութիւն Սիւնեաց Մոսկւա 1860 երես 234. Վարդան պատմագիր. Վենետիկ 1862 երես 103. Լէյն Լէյն:

3. Միթիթարայ Գօշի Գատաստանագիրը Հայոց Վաղարշապատ 1880. երես 74:

6. Մ. Վաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից Մոսկւա. 1860. երես 71, 136, 258 Լէյն: